



ԵԳԻՊՏԱԿԱՆ ՄՈՒՄԻԱՆՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՔԸ

Հազարամյակներն անկարող են փարա-
փեմների մոմիաների առջև Տասնյակ
դարեր նրանք անփոփոխ մնացել են դամ-
բարաններում: Հրաշագործ բաղադրու-
թյունները, որոնցով բուրմերը ներծծել են
վիրակապերն ու մոմիաների մարմիննե-
րը, ժամանակակից գիտությանն անհայտ
են: Դրանց զագոնիքը շատ բիմիկոսներ
ու բուսաբաններ են փորձել բացել:

Վերջերս նոր հայտնաբերություն են
արել Ուզբեկական ՍՍԻ՝ գիտությունների
ակադեմիայի գիտաշխատողները: Բուխա-
րայի մարզում նրանք հայտնաբերել են
տարօրինակ մի բույս, որը ծածկված է
խիտ փշամազերով: Այն կոչվում է ջուռ-
գարական իրիս: Նրա փշերը շնն փտում
են: Երբ դրանք խուզեցին և քամելով հյութ
նրանով ներծծեցին զործվածքը, ապա սա
դարձավ կայուն փտելու նկատմամբ: Ուզ-
բեկ գիտնականները գտնում են, որ
ջուռգարական իրիսը հենց այն բույսն է,
որից հնում եղիպտացիները պատրաստել
են լուծույթ՝ վուշյա գործվածքները տա-
գորելու համար: Վերջիններով փաթափել
են փարավոնների բաղաձավորված մար-
մինները:

Փշավոր իրիսը նոր կիրառություն է
գտել: Ներկայումս նրա հյութով ներծծում
են էլեկտրահաղորդարների փաթափա-
ները:

«Յունի տեխնիկ»

ԽՉՊԵՍ ԶԱՓԵԼ ԼՈՒՆՆԻ ԵԶՐԸ

Պուկուլի աստղադիտարանի գիտնա-
կան Ն. Բիստրովը հորինել է ֆոտո-
էլեկտրական ավտոմատ մի սարք՝ լուսնի
դիրքը որոշելու և նրա եզրի պրոֆիլը չա-
փելու համար: Այդ սարքը մի քանի տաս-
նյակ անգամ փորձացնում է լուսնի դիրքի
լուսնականների անալիզի պրոցեսը, երբ
պրոցեսն էն լուսնի կոորդինատները աստ-
ղերի ֆոնի վրա, և, սնտղական մեթոդ-
ների համեմատությամբ, զգալիորեն
բարձրացնում է չափման ճշտությունը:

(ՏԱՍՍ)

ԱՏՈՄԻ ՆՈՐ ՄԱՍՆԻԿ

Բրուկլինյան ազգային լաբորատո-
րիայի, ինչպես նաև Սիրակուզի և Կա-
լիֆորնիայի համալսարանի գիտնական-
ները հայտնաբերել են ատոմի՝ կարճատե-
կյանը ունեցող նոր մասնիկ, որն ստացել
է ֆի-մեզոն անունը: Այդ ծանր ենթա-
ատոմային մասնիկը հայտնաբերվել է
այն բեկորների ուսումնասիրման ժամա-
նակ, որոնք առաջանում են ջրածնի սո-
վորական ատոմներն, այսպես կոչված,
կա-մեզոններով ուժարկոծելու հետևա-
քով:

Կա-մեզոնների զույգերի հետազոտումը
ցույց է տվել, որ յուրաքանչյուր այդպի-
սի զույգ իրականում հանդիսանում է
կարճատե կյանք ունեցող ֆի-մեզոնի
սորո՛ման պրոցուկտ, որը զույգություն է
ունենում 2×10^{22} վայրկյանի ընթացքում և
այնուհետև սորո՛վում է երկու կա-մեզոն-
ների:

Ֆի-մեզոնի մասսան կազմում է 1020
միլիոն էլեկտրոնվոլտ:

«Մայենա նյուս լատեր» (ԱՄՆ)

ՎԵԱՍՎԱՍՏ ԵՐԻԿԱՄԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ ԴԻԱԿԻ ԵՐԻԿԱՄՈՎ

Պիտեր Բենտ Բրայնսն հիվանդանոցի
բժիշկները անցյալ տարվա ապրիլին
դիակից հանված երիկամը հաջողությամբ
տեղադրել են 25-ամյա հիվանդի վնաս-
ված երիկամի փոխարեն: Այժմ հիվան-
դը, ճիշտ է, ստիպված է ամեն օր զնալ
հիվանդանոց՝ արյունը ստուգման տա-
լու համար, սակայն նա կարող է վերա-
դառնալ հաշվապահական իր սովորական
աշխատանքին:

Հիվանդանոցի վիրաբուժական ծառա-
յության ղեկավար Դ-ր Զոլեֆ Մերեյը
ընդգծել է, որ դա Միացյալ Նահանգնե-
րում միակ հիվանդն է, որը երկար է ապ-
րում այդպիսի վիրահատությունից հե-
տո:

«Յեանա պրես» գործակալություն

ԻՆՉՊԵՍ ՈՐՈՇԵԼ ՃՏԵՐԻ ՍԵՌԸ

Առաջին եղանակ. բռնել ձախ ոտքերից և
15—20 վայրկյան պահել կախված վիճա-
կում: Եթե նա ձգտելով ազատվել, ձիծնու-
նակի պես ձգվելով գլուխը տանի ղեպի
մեջքը, ապա դա արելու է. իսկ եթե գլու-
խը ձգի ղեպի կուրծքը և ընդունի զրեթի
հորիզոնական դիրք, ուրեմն հավ է:

Երկրորդ եղանակ. ձախ ոտքերը մտցնել
չրի մեջ, ապա հանել ու թողնել նրան շոր
տեղում: Եթե հետքերը դասավորված են
մի ուղիղի վրա, ապա արելու է, եթե դի-
զագ են հիշեցնում՝ հավ է:

«Զմունգ ցինյան բառ» (ՉԺԻ)

ՄԱՆՐ ԶՐԻ ԲՈՒԺՈՂ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատոմային էներգիայի արտադրության
կարևոր էլեմենտ հանդիսացող ծանր բու-
րը միաժամանակ լավ միջոց է բաղցկեղի
դեմ պայքարելու համար: Դ-ր Ֆունկելը
(ԱՄՆ) գտել է, որ բաղցկեղով հիվանդ
մեկների մոտ ուռուցքի աճը զգալիորեն
դանդաղում է, եթե նրանց բուժում են
ծանր բուրով:

«Մյանա է վի» (Յեանսիա)

ԹԵՐԹԻ ՄԻԱՅՆ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ամերիկացի պրոֆեսոր Դ. Պրայսը (Ին-
լի համալսարան) եկել է այն եզրահանգ-
ման, որ գիտության անօրինակ արագ ու
լայնածավալ զարգացման կապակցու-
թյամբ առաջացել է գիտնականների հա-
մար հատուկ, ամենօրյա լրագիր հրապա-
րակելու սուր անհրաժեշտությունը: Պրո-
ֆեսորը գտնում է, որ առաջիկա 10 տա-
րում գիտական ինֆորմացիայի ծավալը
կգերազանցի այն բոլորը, ինչ հայտա-
բարված, հրապարակված ու մասսայա-
կանացված է մեր թվարկության ամբողջ
20 հարյուրամյակի ընթացքում:

«Տիրուհա լյուդու» (Լեհաստան)

